ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ
Կ Ա Ր Գ

ք. Երևան, 2023թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու կարգը **(այսուհետ՝ Կարգ)** կարգավորում է փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու, այդ թվում՝ ընթացակարգի, ժամկետների, ժամերի հաշվարկի, պատասխանատվության և հաշվետվողականության, որպես կարգապահական տույժ կիրառվող լրացուցիչ վերապատրաստման, ինչպես նաև կասեցված արտոնագիրը վերականգնելուց հետո ՀՀ փաստաբանների պալատում վերապատրաստում անցնելու հետ կապված հարաբերությունները:

2. Վերապատրաստման նպատակը փաստաբանների գիտելիքի, հմտությունների և մասնագիտական պատրաստվածության բարձրացումն է:

3. Կարգը պարտադիր է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանների պալատ)** բոլոր անդամների համար:

II. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Փաստաբանը վերապատրաստում կարող է անցնել ՀՀ փաստաբանների պալատում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամում (**այսուհետ՝ Փաստաբանական ակադեմիա**), ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրած այլ հաստատությունում:

5. Կարգի 9-րդ կետում նշված նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացները փաստաբանների համար **անվճար** կազմակերպում է ՀՀ փաստաբանների պալատը: Փաստաբանի՝ որպես կարգապահական տույժ կիրառվող լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև կասեցված արտոնագիրը վերականգնելուց հետո ՀՀ փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար փաստաբանը վճարում է 1 (մեկ) ակադեմիական ժամի համար 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ՝ կանխիկ (Պալատի դրամարկղ) կամ անկանխիկ (բանկային կամ վճարային այլ համակարգով):

6. Փաստաբանական ակադեմիան կամ մյուս հավատարմագրված հաստատությունները նույնպես կարող են փաստաբանների համար անվճար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ: Փաստաբանական ակադեմիայի կողմից վճարովի վերապատրաստման դասընթացներն անցկացվում են փաստաբանի և Փաստաբանական ակադեմիայի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

7. Փաստաբանների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպող կազմակերպությունների հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ հաստատված փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման կարգով:

III. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են ըստ կիսամյակների, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի: Կիսամյակի հաշվարկը՝ ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):

9. Յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար փաստաբանը պետք է անցնի նվազագույնը **12** (**տասներկու**) ակադեմիական ժամ (**այսուհետ՝ ժամ, 1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի**) ժամաքանակով (**այսուհետ՝ Նվազագույն ժամաքանակով)** վերապատրաստման դասընթացներ:

10. Վերապատրաստման դասընթացներն անցկացվում են **առկա, հեռավար** կամ **առցանց** ձևերով: Դասընթացի առկա և հեռավար ձևերը կարող են զուգակցվել:

11. Կարգի իմաստով **առկա ձևով** փաստաբանների վերապատրաստման դասընթացն անցկացվում է որոշակի տարածքում (լսարանում, դահլիճում, սենյակում) փաստաբանների խմբով՝ փաստաբանների և դասընթացավարի անմիջական մասնակցությամբ:

12. Կարգի իմաստով **հեռավար ձևով** փաստաբանների վերապատրաստման դասընթացն անցկացվում է փաստաբանների և դասընթացավարի միջև տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության միջոցներով՝ նրանց անմիջական մասնակցությամբ:

13. Կարգի իմաստով **առցանց ձևով** փաստաբանների վերապատրաստման դասընթացն անցկացվում է փաստաբանների կողմից նախապես տեսաձայնագրված նյութը սահմանված կարգով դիտելու միջոցով:

14. Վերապատրաստման դասընթացների թեմաների հրապարակումից հետո փաստաբաններն էլեկտրոնային կամ այլ՝ գրանցվող անձի ինքնությունը պարզելու հնարավորություն ընձեռող եղանակով գրանցվում են վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար:

15. Վերապատրաստման դասընթացի համար գրանցումն ավարտվում է դասընթացի նախորդ օրը մինչև ժամը 12:00-ը: Այն դեպքում, երբ որևէ պատճառով դասընթացը չի կայանալու, ապա ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը (**այսուհետ՝ Աշխատակազմ**) գրանցված անձանց էլեկտրոնային փոստի կամ հեռախոսազանգի միջոցով տեղեկացնում է վերապատրաստման դասընթացի չկայանալու մասին՝ դասընթացը սկսելու ժամից առնվազն 4 (չորս) ժամ առաջ: Սույն կետում նշված ժամկետում գրանցված անձանց չծանուցելու դեպքում դասընթացին ժամանակին ներկայացած նախապես գրանցված փաստաբանը համարվում է դասընթացին մասնակցած:

IV. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

16. Վերապատրաստման դասընթացների ընդհանուր թեմաների ցանկը ՀՀ

փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ նախապես հաստատվում է յուրաքանչյուր կիսամյակի կամ այլ ժամանակահատվածի համար: Հաշվետու ժամանակահատվածի համար վերապատրաստման թեմաների նոր ցանկ սահմանված չլինելու դեպքում վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են հաստատված նախորդ թեմաների շրջանակում:

17. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը կամ վերապատրաստման հարցերով պատասխանատու աշխատակիցը յուրաքանչյուր ամսվա համար կազմում է վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը (որը ներառում է դասընթացի թեման, դասընթացավարի անունը, դասընթացի ամիսը, ամսաթիվը, դասընթացը սկսելու ժամը և անհրաժեշտ այլ տեղեկությունները) և նախապես հրապարակում է ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

18. Փաստաբանն ազատ է ընտրելու իրեն հետաքրքրող թեմայով վերապատրաստման դասընթացը՝ հաշվի առնելով Կարգի 19-րդ կետով նախատեսված առանձնահատկությունը:

19. Յուրաքանչյուր փաստաբան **մեկ օրացուցային տարվա (հունվար դեկտեմբեր ամիսների)** ընթացքում առնվազն **4 (չորս)** ժամ պետք է վերապատրաստվի փաստաբանի վարքագծի միասնական կանոններին և փաստաբանական էթիկայի սկզբունքներին (դեոնթոլոգիա) վերաբերող որևէ թեմայով (**այսուհետ՝ Դեոնթոլոգիայի թեմա**):

20. Վերապատրաստման թեմաների համալրման նպատակով ՀՀ փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով պատասխանատու աշխատակիցը պարբերաբար ՀՀ փաստաբանների պալատի նախագահին է ներկայացնում առաջարկություն, որը կազմվում է փաստաբանների շրջանում կատարվող հարցումների կամ փաստաբաններից ստացված առաջարկությունների հիման վրա:

21. Դասընթացավարների ընտրության չափանիշները և դասընթացավարների ընտրության կարգը, ինչպես նաև վերապատրաստման դասընթացի ծրագրի ձևը հաստատում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահը:

V. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄԸ

22. Փաստաբանը վերապատրաստմանը մասնակցելու պարտավորությունից ազատվում է սույն կարգին համապատասխան՝ հետևյալ դեպքերում.

ա. Փաստաբանների պալատի խորհրդի անդամ փաստաբանների կողմից (ինչպես նաև խորհրդի նախագահի) խորհրդի նիստերին մասնակցելու դեպքում.

բ. Հաշվիչ հանձնաժողովի փաստաբան անդամների կողմից հանձնաժողովի նիստերին և աշխատանքներին մասնակցելու դեպքում.

գ. Որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամների կողմից որակավորման քննություններին մասնակցելու դեպքում.

դ. Փաստաբանների պալատի կողմից ձևավորված հանձնաժողովների քննարկումներին մասնակցելու դեպքում.

ե. ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորը՝ պաշտոնավարման ընթացքում, ինչպես նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի փաստաբան անդամները՝ կառավարման խորհրդի անդամի պաշտոնավարման ընթացքում.

զ. Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամները՝ նշված խորհրդի նիստերին մասնակցելու դեպքում.

է. պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունում, ինչպես նաև ՀՀ արդարադատության ակադեմիայում դասավանդող փաստաբանները՝ իրավունքի բնագավառում դասախոսություն անցկացնելու դեպքում.

ը. Փաստաբանների պալատի կամ ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից անվճար իրավաբանական օգնություն (pro bono) ծրագրի շրջանակում քաղաքացուն տրամադրած անվճար խորհրդատվության դեպքում.

թ. ՀՀ փաստաբանական ակադեմիայում դասավանդելու կամ Փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթաց անցկացնելու դեպքում.

ժ. ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդրի պրակտիկան լրիվ ծավալով ղեկավարելու դեպքում.

ժա. փաստաբանական գործունեություն չիրականացնող առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամության դեպքում.

ժբ. հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև երեխայի երեք տարեկանը լրանալու դեպքում.

ժգ. կին փաստաբանները՝ առնվազն երեք անչափահաս երեխա ունենալու դեպքում՝ մինչև երեխաներից մեկի չափահաս դառնալը.

ժդ. այլ պետությունում ուսուցում անցնող փաստաբանը.

ժե. ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով զորահավաքի և ռազմական գործողությունների մասնակցելու դեպքում.

ժզ. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտելու և փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստանալու դեպքում՝ փաստաբանական ակադեմիան ավարտելուն հաջորդող 2 (երկու) կիսամյակների ընթացքում.

ժէ. մասնագիտական գիտական աշխատության կամ ձեռնարկի կամ դասագրքի հրատարակման, ինչպես նաև գիտաժողովի մասնակցության դեպքում.

ժը. 63 (վաթսուներեք) տարին լրացած փաստաբանները՝ փաստաբանական գործունեություն չիրականացնելու դեպքում.

ժթ. փաստաբանների առանձին խմբերի համար՝ կապված փաստաբանի տարիքի, կարգավիճակի կամ այլ հատկանիշի հետ՝ Խորհրդի առանձին որոշմամբ վերապատրաստմանը մասնակցելու արտոնություններ սահմանելու դեպքում:

23. Հաշվետու կիսամյակի համար վերապատրաստման 12 (տասներկու) ժամը (Նվազագույն ժամաքանակը) լրացնելուց հետո փաստաբանը կարող է մասնակցել վերապատրաստման դասընթացներին, եթե խմբում կա թափուր տեղ, սակայն այդ դասընթացի մասնակցության ժամաքանակը այդ փաստաբանի համար չի հաշվարկվում և չի տեղափոխվում հաջորդ կիսամյակ, բացառությամբ

հետևյալ դեպքերի՝

ա. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ընթացքում Նվազագույն ժամաքանակը գերազանցող ժամերը կարող են տեղափոխվել միայն հաջորդ կիսամյակ (հուլիս-դեկտեմբեր).

բ. օրացուցային տարվա ընթացքում Դեոնթոլոգիայի թեմայով դասընթացներին 4 (չորս) ժամը գերազանցող մասնակցության ժամերը կարող են տեղափոխվել հաջորդ օրացուցային տարի՝ միայն Դեոնթոլոգիայի թեմայով դասընթացների հաշվարկի նպատակով:

24. Այն դեպքում, երբ փաստաբանն արտոնագիր է ստացել հաշվետու կիսամյակի ամիսներից որևէ մեկի ընթացքում (անկախ ամսվա օրվանից), ապա վերապատրաստման կիսամյակի Նվազագույն ժամաքանակի՝ 12 (տասներկու) ժամի փոխարեն մինչև հաշվետու կիսամյակի վերջին ամիսը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար փաստաբանը կարող է վերապատրաստվել յուրաքանչյուր 1 (մեկ) ամիսը՝ 2 (երկու) ժամ հաշվարկով: Սույն կետում նշված կարգավորումը տարածվում է նաև կասեցված արտոնագրի գործողությունը վերականգնած փաստաբանների նկատմամբ՝ միայն Նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու մասով:

25. Փաստաբանական ակադեմիայում դասավանդող կամ ՀՀ փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթացն անցկացնող փաստաբանների դասավանդած յուրաքանչյուր ակադեմիական ժամը հավասարեցվում է Նվազագույն ժամաքանակի մեջ հաշվարկվող վերապատրաստման մեկ ժամի: Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների, անկախ վերջիններիս քանակից, պրակտիկան (փորձուսուցումը) փաստաբանի կողմից լրիվ ծավալով ղեկավարելը հավասարեցվում է Նվազագույն ժամաքանակի հաշվարկի մեջ ներառվող վերապատրաստման համար նախատեսված 12 (տասներկու) ժամի՝ յուրաքանչյուր կիսամյակի համար: Նշված ժամերը հաշվարկվում են այն կիսամյակի համար, որի ընթացքում արձանագրվել է փաստաբանի կողմից ունկնդրի պրակտիկան լրիվ ծավալով ղեկավարած լինելու (պրակտիկայի ավարտի) փաստը, ինչը կարող է հաստատվել Փաստաբանական ակադեմիայի համապատասխան տեղեկանքով:

26. ՀՀ փաստաբանների պալատի կամ Փաստաբանական ակադեմիայի կողմից կազմակերպված անվճար իրավաբանական օգնության (pro bono) ծրագրի ծրագրի շրջանակներում փաստաբանի՝ 1 (մեկ) քաղաքացուն տրամադրած անվճար խորհրդատվությունը հավասարեցվում է Նվազագույն ժամաքանակի հաշվարկի մեջ ներառվող 2 (երկու) ժամ վերապատրաստման դասընթացի մասնակցության: Սույն կետում նշված ծրագրի շրջանակում իրավաբանական այլ օգնության (ներկայացուցչություն, դատական ներկայացուցչություն, պաշտպանություն, վկայի շահերի ներկայացում) տրամադրման դեպքում, հավասարեցվող ժամաքանակը որոշում է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը՝ փաստաբանի դիմումի հիման վրա: Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման մասին կարգով նախատեսված՝ նվազագույն չափանիշներին համապատասխան կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ամփոփ ցուցակում ընդգրկված փաստաբանները ազատվում են

վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունից:

27. Փաստաբանների՝ արտերկրում ուսուցանելու ժամերը ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից կարող են ներառվել (հաշվարկվել) փաստաբանի Նվազագույն ժամաքանակում, իսկ համապատասխան վճարման անդորրագրի ներկայացման դեպքում նաև լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակում՝ կախված դասընթացի թեմայից և դասընթացավարից կամ դասընթացը կազմակերպող հաստատությունից:

28. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների (ինչպես նաև խորհրդի նախագահի)՝ խորհրդի նիստերին, հաշվիչ հանձնաժողովի փաստաբան անդամների՝ հանձնաժողովի նիստերին և աշխատանքներին, որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամների՝ որակավորման քննություններին, կարգապահական հանձնաժողովի անդամների՝ կարգապահական հանձնաժողովի նիստերին ի պաշտոնե մասնակցելու դեպքում նշված մարմինների փաստաբան անդամներն ազատվում են վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունից՝ պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածի համար:

29. ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորված հանձնաժողովների (հանձնախմբերի, աշխատանքային խմբերի)՝ դրանց աշխատանքներին մասնակցելու (համապատասխան քննարկումներին մասնակցելու, փաստաթղթեր կազմելու կամ փաստացի կատարված այլ աշխատանք կատարելու) ժամերը համամասնորեն հաշվարկվում են որպես Նվազագույն ժամաքանակի հաշվարկի մեջ ներառվող վերապատրաստման ժամեր (որպես կանոն՝ 1 ժամ կատարված աշխատանքը՝ 1 (մեկ) վերապատրաստման ժամ):

30. Սույն կարգի 28-րդ և 29-րդ կետերում, նշված անձանց կարգավիճակը (խորհրդի անդամի, հաշվիչ հանձնաժողովի, որակավորման հանձնաժողովի, կարգապահական հանձնաժողովի կամ հանձնախմբի կամ աշխատանքային խմբի անդամի կարգավիճակը) դադարելու կիսամյակին հաջորդող կիսամյակից սկսած փաստաբանը պարտավոր է մասնակցել վերապատրաստման դասընթացներին, բացառությամբ ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորած հանձնաժողովի (հանձնախմբի, աշխատանքային խմբի) այն անդամի, որի կատարած աշխատանքի ծավալից ելնելով, ՀՀ փաստաբանների պալատի նախագահը վերապատրաստման դասընթացի հավասարեցման ավելի երկար ժամանակ է սահմանել:

31. Փաստաբանների կողմից ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստերին մասնակցելու ժամերը համամասնորեն հաշվարկվում են որպես Նվազագույն ժամաքանակի հաշվարկի մեջ ներառվող վերապատրաստման ժամեր (1 (մեկ) ակումբի նիստը՝ 4 (չորս) ժամ):

32. Փաստաբանների կողմից ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի նիստերին մասնակցելու ժամերը համամասնորեն հաշվարկվում են որպես Նվազագույն ժամաքանակի հաշվարկի մեջ ներառվող վերապատրաստման ժամեր (1 (մեկ) նիստը՝ 4 (չորս) ժամ):

33. Պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության, ինչպես նաև Արդարադատության ակադեմիայում դասավանդող անձանց (դասախոսների)՝ իրավունքի բնագավառում դասախոսությունները կարող են հավասարեցվել Նվազագույն ժամաքանակով

վերապատրաստման դասընթացների մասնակցությանը՝ մեկ օրացուցային տարով (երկու կիսամյակով) բարձրագույն ուսումնական հաստատության կամ Արդարադատության ակադեմիայի կողմից տրամադրված համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի գրության հիման վրա: Հերթական տարվա ընթացքում հավասարեցման համար փաստաբանը պետք է ներկայացնի նոր փաստաթուղթ:

34. Նվազագույն ժամաքանակի հաշվարկի մեջ ներառվող վերապատրաստման դասընթացներին մասնակցելուն կարող է հավասարեցվել փաստաբանի կողմից մասնագիտական գիտական աշխատության կամ ձեռնարկի կամ դասագրքի հրատարակումը, ինչպես նաև գիտաժողովի մասնակցությունը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշման հիման վրա, որտեղ նշվում է նաև վերապատրաստման դասընթացին հավասարեցված ժամաքանակը:

VI. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

35. Փաստաբանը պարտավոր է իր հաշվին՝

ա. լրացուցիչ անցնել վերապատրաստման դասընթացներ, եթե ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը վերականգնել է արտոնագրի գործողությունը, և/կամ

բ. մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների, եթե ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ձևով:

Սույն կետում նշված պարտականությունը փաստաբանը կրում է անկախ Նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու կամ չմասնակցելու փաստից:

(կետը փոփոխվել է 02.04.2024թ. թիվ 5/14-Լ որոշմամբ)

36. Արտոնագիրը վերականգնած փաստաբանը պարտավոր է իր հաշվին լրացուցիչ անցնել վերապատրաստման դասընթացներ՝ կասեցված յուրաքանչյուր ամսվա համար 2 (երկու) ժամ ժամաքանակով՝ խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 6 (վեց) ամսվա ընթացքում, եթե ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն այլ ժամանակաշրջան չի սահմանել:

37. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը կարող է առանձին որոշմամբ սահմանել սույն կարգի 35-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ անցնելու վճարից ազատելու արտոնություն՝ կապված փաստաբանի առողջական վիճակի, պատերազմի կամ ռազմական գործողություններին մասնակից լինելու կամ այլ կարգավիճակի հետ:

38. Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ձևով տույժ նշանակելու մասին ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 6 (վեց) ամսվա ընթացքում փաստաբանը պարտավոր է իր հաշվին անցնել հանձնաժողովի որոշման մեջ նշված ժամաքանակով լրացուցիչ վերապատրաստման դասընթաց՝ Դեոնթոլոգիայի թեմայով, եթե ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական

հանձնաժողովն այլ ժամանակաշրջան և/կամ այլ թեմա չի սահմանել:

(կետը փոփոխվել է 02.04.2024թ. թիվ 5/14-Լ որոշմամբ)

39. Կարգի 35-րդ կամ 44-րդ կետում նշված հիմքով իր հաշվին վերապատրաստման դասընթացին մասնակցելու դեպքում փաստաբանը պարտավոր է ողջամիտ ժամկետում առձեռն, էլեկտրոնային փոստի կամ փոստային ծառայության միջոցով գրավոր տեղեկացնել ՀՀ փաստաբանների պալատին, նշելով՝

ա) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կամ կարգապահական հանձնաժողովի որոշման ամսաթիվը և համարը, որի հիման վրա պետք է վերապատրաստում անցնել (տույժի դեպքում՝ որոշմամբ սահմանված լրացուցիչ վերապատրաստման դասընթացի ժամաքանակը),

բ) արտոնագրի համարը,

գ) ՀՀ փաստաբանների պալատի, Փաստաբանական ակադեմիայի, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված կամ ՀՀ փաստաբանների պալատի կողմից ընդունելի վերապատրաստում իրականացնող այլ կազմակերպության անվանումը,

դ) դասընթացավարի անունը, ազգանունը,

ե) դասընթացի թեման և

զ) դասընթացի անցկացման օրը, ժամը և վայրը:

Դիմումը պետք է ստորագրված լինի փաստաբանի կողմից, դիմումին պետք է կցված լինի վերապատրաստում իրականացնող կազմակերպությանը վճարում կատարելու փաստը հաստատող անդորրագրի պատճենը (կամ այդ կազմակերպության գրավոր հավաստումը, որ տեղեկացված է փաստաբանի կողմից իր հաշվին վերապատրաստման դասընթացներին մասնակցելու անհրաժեշտության մասին): Սույն կետում նշված կարգի խախտմամբ իրականացված վերապատրաստումը չի հաշվարկվելու, որպես վերապատրաստման դասընթացին մասնակցություն, բացառությամբ ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից հարգելի ճանաչված դեպքերի:

VII. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

40. Հավատարմագրված կազմակերպությունները յուրաքանչյուր ամսվա համար, մինչև հաջորդ ամսվա 10-ը (տասը) տեղեկանք են ներկայացնում ՀՀ փաստաբանների պալատին վերապատրաստված փաստաբանների մասին՝ նշելով փաստաբանի տվյալները, վերապատրաստված ժամերի քանակը, վերապատրաստման թեման և դասընթացավարների տվյալները:

41. ՀՀ փաստաբանների պալատը փաստաբանի դիմումի հիման վրա երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է տեղեկանք վերապատրաստված ժամերի մասին: Մեկ օրացուցային տարվա ընթացքում՝ երկու կիսամյակների համար Նվազագույն ժամաքանակի դասընթացներին մասնակցած փաստաբաններին իրենց դիմումի հիման վրա տրամադրվում են վկայագրեր:

42. ՀՀ փաստաբանների պալատը վերապատրաստման ժամերի վերաբերյալ տեղեկությունները կարող է անհատապես տեղադրել

www.advocates.am կայքում՝ յուրաքանչյուր փաստաբանի անձնական էջում, որը տեսանելի է լինելու միայն փաստաբանի համար:

VIII. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

43. Կարգը խախտելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով:

44. Փաստաբանը սպառում է Նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացի համար նախատեսված անվճար ժամերի չափով դասընթաց անցնելու իր հնարավորությունը, եթե՝

ա. վերապատրաստման համար գրանցվել է, սակայն անհարգելի պատճառով չի ներկայացել.

բ. Կարգի XII գլխում նշված այլ դեպքերում:

Սույն կետում նշված դեպքում փաստաբանն այդ ժամերը պարտավոր է լրացնել իր հաշվին՝ Կարգի VI-րդ գլխով սահմանված կարգով: Վերապատրաստման չներկայանալը կամ չանցնելը հարգելի ճանաչելու խնդրանքով փաստաբանը՝ տասնօրյա ժամկետում գրավոր դիմում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին:

45. ՀՀ փաստաբանների պալատը չի ենթարկում կարգապահական պատասխանատվության հաշվետու կիսամյակում վերապատրաստմանը չմասնակցած՝

ա. փաստաբանական գործունեություն չիրականացնող **63 (վաթսուներեք)** տարին լրացած փաստաբաններին.

բ. փաստաբանական գործունեություն չիրականացնող առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող փաստաբաններին.

գ. հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև ծննդաբերությունը՝ համապատասխան բժշկական փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ կին փաստաբաններին.

դ. ծննդաբերությունից հետո երեք տարի ժամանակով (մինչև երեխայի երեք տարեկան դառնալը)՝ երեխայի ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ կին փաստաբաններին.

ե. առնվազն երեք անչափահաս երեխա ունեցող (մինչև երեխաներից մեկի չափահաս դառնալը)՝ երեխաների ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ կին փաստաբաններին.

զ. այլ պետությունում ուսուցում անցնող փաստաբաններին, եթե նրանք նախապես գրավոր (կամ էլեկտրոնային փոստով) տեղեկացրել են ՀՀ փաստաբանների պալատին.

է. Փաստաբանական ակադեմիայի շրջանավարտ փաստաբաններին՝ Փաստաբանական ակադեմիան ավարտելու կիսամյակին հաջորդող երկու կիսամյակների ընթացքում.

զ. փաստաբաններին, երբ նրանց կողմից վերապատրաստմանը չմասնակցելու հանգամանքը պայմանավորված է հայտարարված արտակարգ կամ ռազմական դրության կամ այլ անկանխելի պատճառով անձանց տեղաշարժի տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների հետ, եթե առկա է տվյալ ժամանակահատվածի համար բոլոր փաստաբանների նկատմամբ

կարգապահական պատասխանատվության հարց չբարձրացնելու վերաբերյալ Պալատի խորհրդի որոշում.

է. այն փաստաբաններին, ովքեր ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցել են զորահավաքի և ռազմական գործողությունների:

46. Նախկինում վերապատրաստում չանցնելու հիմքով կարգապահական պատասխանատվության չենթարկված փաստաբանի նկատմամբ առաջին անգամ կարգապահական վարույթ կարող է չհարուցվել (ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորի կողմից կարող է տեղեկանք չտրամադրվել) հաշվետու կիսամյակի համար Նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով, եթե նա գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) է ներկայացրել ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորին կամ ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ պատրաստակամություն հայտնելով այսուհետ մասնակցել վերապատրաստման դասընթացներին:

(կետը լրացվել է 02.04.2024թ. թիվ 5/14-Լ որոշմամբ)

47. Նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթը կարճվում է, եթե նա գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած Նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացների ժամերն անցնել հաջորդ կիսամյակում և եթե նա չի օգտվել Կարգի 46-րդ կետով նախատեսված հնարավորությունից:

48. Կարգի 46-րդ կամ 47-րդ կետերում նշված փաստաբանի դիմումը՝ հաջորդ կիսամյակում վերապատրաստման դասընթացներն անցնելու վերաբերյալ՝ առաջացնում է նշված ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականություն: Կարգի 46-րդ կամ 47-րդ կետում նշված հիմքով հաջորդ կիսամյակում վերապատրաստման դասընթացին մասնակցելու դեպքում, փաստաբանը պետք է նախապես գրավոր տեղեկացնի ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ նշելով դասընթացի թեման, դասընթացի ամսաթիվը և մասնակցության հիմքը:

IX. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՉՄԱՍՆԱԿՑԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

49. ՀՀ փաստաբանների պալատը վերապատրաստման դասընթացներին չմասնակցած փաստաբանների կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելիս կիրառում է պատասխանատվությունն աստիճանաբար խստացնելու քաղաքականություն:

50. ՀՀ փաստաբանների պալատի նախագահը չի նախաձեռնում կարգապահական վարույթ 2022թ. պարտադիր վերապատրաստման դասընթացներին չմասնակցած փաստաբանների նկատմամբ:

ՀՀ փաստաբանական ակադեմիան 2023-2026 թվականների որևէ

կիսամյակի համար նախատեսված վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու հարցը քննարկելու նպատակով համապատասխան տեղեկանք տրամադրելիս առաջնահերթ անդրադառնում է այն փաստաբանին, որը՝

ա. հաշվետու կիսամյակի ընթացքում չի մասնակցել որևէ վերապատրաստման դասընթացի, կամ

բ. վերջին երկու տարվա ընթացքում ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անկախ տույժը մարված լինելու կամ տույժ նշանակելու մասին որոշումը ուժի մեջ մտնելու հանգամանքից), կամ

գ. որպես արտոնություն, խնդրել է կարճել վերապատրաստմանը չմասնակցելու հիմքով նախկինում հարուցված կարգապահական վարույթը, հաջորդ կիսամյակում վերապատրաստման դասընթացին մասնակցելու հիմքով, և չի մասնակցել այդ վերապատրաստման դասընթացին, կամ

դ. հաշվետու ժամանակահատվածում իր հաշվին չի մասնակցել Պալատի խորհրդի որոշմամբ սահմանված վերապատրաստման դասընթացի կամ խախտել է ժամանակացույցը:

Սույն կետում նախատեսված տեղեկատվությունը ՀՀ փաստաբանական ակադեմիայի համար ապահովում է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը: ՀՀ փաստաբանների պալատը և ՀՀ փաստաբանական ակադեմիան կարող են կիրառել համապատասխան տեղեկատվական ընդհանուր օգտագործման պահոցներ՝ սույն կարգով նախատեսված գործողություններն իրականացնելու համար:

(կետը լրացվել է 03.02.2023թ. թիվ 4/7-Լ որոշմամբ)

51. ՀՀ փաստաբանների պալատը վերապատրաստման հետ կապված հարցերով տեղեկություններ փոխանակելու նպատակով համագործակցում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի հետ: Նշված հարաբերությունները կարող են կարգավորվել նաև համապատասխան պայմանագրի միջոցով:

X. ՀԵՌԱՎԱՐ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

52. Հեռավար վերապատրաստում կարող է իրականացնել ՀՀ փաստաբանների պալատը կամ Փաստաբանական ակադեմիան:

53. Հեռավար վերապատրաստումն իրականացվում է համացանցի միջոցով միաժամանակյա դիտման ռեժիմով: Հեռավար վերապատրաստման յուրաքանչյուր դաս բաղկացած է առնվազն չորս ժամից:

54. Հեռավար վերապատրաստում անցնող փաստաբանի ներկայությունը տեսախցիկի առջև պարտադիր է:

55. Հեռավար վերապատրաստման դասընթացին կարող են միանալ սահմանափակ թվով փաստաբաններ, որոնք սույն կարգի համաձայն նախապես գրանցվել են դասընթացին մասնակցելու համար և ստացել են մասնակցության թույլտվություն: Դասընթացին հեռավար ձևով մասնակցելու (գրանցվելու) համար փաստաբանը պարտավոր է ոչ ուշ, քան դասընթացը սկսելուց երկու օր առաջ էլեկտրոնային նամակ ուղարկել համապատասխան հայտարարության մեջ նշված էլեկտրոնային հասցեով: Հետադարձ դրական պատասխան ստանալուց հետո,

փաստաբանը համարվում է գրանցված դասընթացին:

56. Հեռավար կարգով վերապատրաստում անցնող փաստաբանը պետք է ունենա տեխնիկական բավարար միջոցներ, որոնց մասին ՀՀ փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով համակարգողը էլեկտրոնային նամակով իրազեկում է հեռավար դասընթացին թույլատրված փաստաբանին:

57. Հեռավար վերապատրաստման դասընթացին մասնակցող փաստաբանը պարտավոր է՝ վերապատրաստման դասընթացի ժամանակ բացառել կողմնակի ձայները (աղմուկը), տեսախցիկը դասընթացի ժամանակ միշտ պահել միացված, տեսախցիկն ուղղել այնպես, որ տեսանելի լինի փաստաբանի դեմքը, տեխնիկական խնդիրների դեպքում անմիջապես հայտնել դասընթացավարին, բարձրախոսը միացնել միայն դասախոսի, լսարանի կամ համապատասխան մասնագետի հետ կապ հաստատելու կամ հարց տալու դեպքում, դասընթացը սկսվելուց 10 րոպե առաջ մուտք գործել ՀՀ փաստաբանների պալատի կամ Փաստաբանական ակադեմիայի կողմից տրամադրված հեռավար վերապատրաստման համար նախատեսված իր անձնական էջ (Google +) կամ ակտիվացնել իրեն ուղարկված հեռավար դասընթացի հղումը: Սույն գլխով սահմանված պարտականությունները կամ պայմանները չկատարելու կամ չպահպանելու դեպքում, փաստաբանի կողմից հեռավար վերապատրաստման դասընթացին մասնակցությունը չի հաշվարկվի որպես պարտադիր վերապատրաստման ժամ:

XI. ԱՌՑԱՆՑ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

58. Առցանց ձևով վերապատրաստումը կազմակերպում է ՀՀ փաստաբանների պալատը: Առցանց ձևով վերապատրաստում կարող է կազմակերպել նաև ՀՀ փաստաբանական ակադեմիան:

59. Առցանց ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել բոլոր փաստաբանները, սակայն մեկ կիսամյակի համար այն կարող է հաշվարկվել ոչ ավել **4 (չորս)** ժամից:

60. Կարգի 35-րդ կետի ա. և բ. ենթակետերում նշված փաստաբաններն իրենց հաշվին կարող են առցանց վերապատրաստման դասընթացներից օգտվել մեկ կիսամյակի համար ոչ ավել **8 (ութ)** ժամից՝ Կարգի VI գլխով նախատեսված կարգով:

61. Առցանց վերապատրաստման դասի տևողությունը չի կարող գերազանցել երկու ժամը:

62. Փաստաբաններն առցանց վերապատրաստմանը մասնակցելու համար համակարգ են մուտքագրում իրենց արտոնագրի համարը, անունը, ազգանունը և էլեկտրոնային փոստի հասցեն:

63. Դասընթացին մասնակցելու համար փաստաբանը լրացնում է համապատասխան թեսթ, համակարգը հաշվում է թեսթի արդյունքը, որը երևում է էկրանին, և պահվում տվյալների բազայում:

64. Տեսաձայնագրված դասընթացը յուրաքանչյուր 10-15 րոպեն մեկ անգամ կարող է ընդհատվել թվաբանական կամ թեսթային հարցերով: Հարցերին ճիշտ պատասխան տալուց հետո դասընթացը շարունակվում է, հարցերի սխալ պատասխանի դեպքում դասընթացն ընդհատվում է, իսկ փաստաբանը

համարվում է առցանց վերապատրաստմանը չմասնակցած:

65. Դասընթացն ավարտվելուց հետո փաստաբանը կրկին թեսթ է լրացնում, որի դրական պատասխանի դեպքում համակարգը փաստաբանի տվյալներն ուղարկում է տվյալների բազա, ինչը հնարավորություն է ընձեռում հաշվարկել փաստաբանի մասնակցությունը Առցանց դասընթացին՝ որպես պարտադիր վերապատրաստման ժամ: Թեսթի բացասական պատասխանի դեպքում փաստաբանի Առցանց վերապատրաստման ժամերը չեն հաշվարկվում:

XII. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

66. ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպված դասընթացների բնականոն ընթացքն ապահովում է դասընթացավարը, որը՝

ա. պարտավոր է դասընթացը սկսել ժամանակին.

բ. հայտարարում է ընդմիջման ժամը (որպես կանոն 4 ակադեմիական ժամի դեպքում, տրամադրվում է 20 րոպե տևողությամբ ընդմիջում).

գ. կարող է դուրս հրավիրել դասընթացը խանգարող փաստաբանին (այս դեպքում, փաստաբանը կհամարվի դասընթացին չմասնակցած և այդ դասընթացի տևողության մասով իր անվճար ժամերը սպառած).

դ. պարտավոր է հարգանքով վերաբերվել դասընթացի մասնակիցներին:

67. ՀՀ փաստաբանների պալատում անցկացվող դասընթացի մասնակիցներին հաշվառում է Աշխատակազմը՝ գրանցման թերթիկում փաստաբանների մուտքի և ելքի ժամերը նշելու և նրանց կողմից ստորագրելու միջոցով: Փաստաբանների մասնակցությունը դասընթացին կարող է հաշվառվել նաև պլաստիկ քարտերի միջոցով:

68. ՀՀ փաստաբանների պալատում անցկացվող դասընթացի ընդմիջման ժամանակ, որպես կանոն փաստաբաններին տրամադրվում է սուրճից, թեյից և սննդից օգտվելու հնարավորություն:

69. Վերապատրաստման դասընթացին մասնակցող փաստաբանը պարտավոր է՝

ա. ժամանակին ներկայանալ դասընթացին.

բ. չխոչընդոտել դասընթացի բնականոն ընթացքը՝ աղմկելու, վիճելու, հեռախոս օգտագործելու կամ այլ եղանակով.

գ. կատարել դասընթացավարի՝ դասընթացին վերաբերող առաջադրանքը.

դ. հեռանալիս գրանցվել՝ նշելով հեռանալու ժամը (չգրանցվելու դեպքում փաստաբանի մասնակցությունը տվյալ դասընթացին չի հաշվարկվելու):

70. Դասընթացավարն իրավունք չունի գնահատել վերապատրաստման դասընթացներին մասնակցող փաստաբանների գիտելիքները և հմտությունները:

71. Վերապատրաստման դասընթացին կարող են ներկա գտնվել ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, խորհրդի անդամները և աշխատակիցները:

XIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

72. Արցախի Հանրապետության փաստաբանները կարող են անվճար կարգով մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական

ակադեմիայի կողմից անցկացվող դասընթացներին:

* * *